ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԿԱՐԾԻՔ

Դավիթ Գագիկի Վարդանյանի «Համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով, Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Ներդրումների և տնտեսական աճի փոխկապվածության հարցերը մշտապես գտնվում են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Հետազոտության ավելի ընդարձակ բնագավառ են խնայողությունների, ներդրումների և տնտեսական աճի փոխառնչությունները: Անկախ այն բանից, թե այս կամ այն ազգային տնտեսությունում իրականացվող ներդրումների ֆինանսավորումն իրականացվում է ներքին կամ արտաքին աղբյուրներից, միևնույն է, երկու դեպքում էլ ներդրումների աղբյուր են հանդիսանում խնայողությունները: Տևական ժամանակ ՀՀ տնտեսական աճի և զարգացման համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման հիմնական և հեռանկարային աղբյուր են դիտվել օտարերկրյա ներդրումները, որոնց համաշխարհային ներհոսքը վերջին տարիներին, հատկապես COVID-19-ի ազդեցությամբ նշանակալի անկում է ունեցել, ավելին՝ տեղի են ունենում արմատական վերադասավորումներ, ինչի ազդեցությամբ մեծանում են զարգացող երկրների մեծ մասին, հատկապես Հայաստանի նման երկրի ազգային տնտեսություններում արտաքին աղբյուրներից ներքին ներդրումների ֆինանսավորման ռիսկերը, իսկ աշխարհաքաղաքական գործոնի ազդեցությամբ, սահմանվում են սահմանափակումներ: ՀՀ օտարերկրյա ներդրումների ներհոսքի անկման միտումները սկիզբ են առնում 2008-2009 թթ. ֆինանսական ճգնաժամի ժամանակներից և էլ ավելի բացասական դրսևորումներ են ունեցել համավարակի տարածմամբ: Նույնիսկ վերջինիս հաղթահարման պայմաններում քիչ հավանական է, որ կնվազեն ֆինանսավորման արտաքին աղբյուրների հետ կապված ռիսկերը: Բացի դրանից, առաջավոր համաշխարհային փորձը վկայում է, որ տևական ժամանակահատվածում կայուն և բարձր աճի տեմպեր ապահովվել են այն երկրներում, որտեղ ներքին ներդրումների ֆինանսավորման մեջ դոմինանտ են եղել ներքին խնայողությունները:

ՀՀ-ում ներքին խնայողությունները տևական ժամանակ գտնվում են նշանակալի ցածր մակարդակում, իսկ համախառն ազգային խնայողությունների կարևոր տարրերից մեկը՝ տնային տնտեսությունների հատվածի խնայողոյթունները, մի փոքր բացառությամբ, անցած երեք տասնամյակների ընթացքում ունեցել են բացասական մակարդակ:

Չնայած տնտեսության համար մեծ կարևորությանը, ՀՀ-ում խնայողությունների ձևավորման և ներդրումների փոխակերպման հիմնախնդիրները պատշաճ չեն հետազոտվել: Մինչդեռ ձևավորված միտումների և ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրով սահմանված նպատակներին հասնելու տեսանկյունից, հրատապ է դարձել խնայողությունների ձևավորման և արդյունավետ օգտագործմանն առնչվող հիմնախնդրի համապարփակ ուսումնասիրությունը, դրանց մակարդակի բարձրացման խթանների կիրառումը: Այս առումով, հետազոտական թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում:

Գիտական դրույթների և եզրահանգումների հիմնավորվածությունը

Գրախոսվող աշխատանքն ունի ներդաշնակ, տրամաբանական կառուցվածք. ներածություն, երեք գլուխ, եզրակցություն, գրականության ցանկ և հավելվածներ: Աշխատանքի կառուցվածքային տարրերն արտացոլում են խիստ մեթոդաբանական ենթակայություն, հետևողական և խորությամբ բացահայտում են հետազոտության թեման, դրված խնդիրների լուծման ընթացքը, ինչն ապահովում է ատենախոսությունում ձևակերպված նպատակին՝ մասնավոր խնայողությունների խթանման մեթոդական դրույթների և ներքին խնայողություններով ՀՀ սոցիալ-տնտեսական երկարաժամկետ զարգացման ներդրումային նախագծերի ֆինանսավորման գործնական մոտեցումների մշակմանը հասնելը: Դրված խնդիրների լուծումը կանխորոշել է ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը:

Աշխատանքում հետազոտության նպատակի, օբյեկտի և առարկայի սահմանումները լիարժեք համապատասխանում են ատենախոսական հետազոտության թեմային, դրանում ներկայացված հիմնախնդրին:

Ատենախոսական աշխատանքում շարադրված, պաշտպանության ներկայացվող դրույթները հիմնավորված են և արժանահավատ, նկատի ունենալով, որ հիմնված են դասական և ժամանակակից տեսությունների կանխադրույթների, հետազոտության լայն սպեկտրի ընդհանուր գիտական և հատուկ մեթոդների ճիշտ օգտագործման վրա, ինչը հնա-

ռավորություն է ընձեռել լուծելու ձևակերպված խնդիրները: Ատենախոսական աշխատանքի բաժիններում կատարված ընդհանրացումները և եզրակացությունները հիմնված են հիմնականում արտասահմանյան և փոքր չափով՝ հայրենական գիտական աշխատությունների մանրազնին վերլուծության և քննադատական գնահատման վրա:

Տեսական դրույթների, մեթոդական տեխնիկայի, եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորման ընթացքում, հեղինակը կիրառել է տարատեսակ մեթոդաբանական մոտեցումներ. համակարգային, տրամաբանական, պատմական, քանակական, որակական:

Ատենախոսական հետազոտության մեթոդաբանական հենքը պայմանավորել է գիտական ճանաչողության հիմնարար մեթոդների համալիրը. վարկածների, վերլուծության և սինթզի, դեդուկցիայի, ինդուկցիայի, տնտեսա-վիճակագրական մեթոդների, տնտեսամաթեմատիկական մոդելավորման մեթոդների:

Ատենախոսական աշխատանքի նյութերի, եզրակացությունների և առաջարկությունների շարադրանքի ոճը և լեզուն համապատասխանում են գիտականության պահանջներին: Ատենախոսությանը բնորոշ են իմաստային ավարտուն լինելը, ամբողջականությունը և տեքստի կապվածությունը: Ատենախոսության գլխավոր գաղափարը՝ տնտեսական տևական կայուն աճի պահպանման համար անհրաժեշտ ներքին խնայողություններով ներդրումների բարձր կայուն մակարդակի ապահովման կարևորության բացահայտումը, հետևելի է ինչպես տեսական հիմնավորման փուլում, այնպես էլ համապատասխան գիտական դրույթների և եզրակացությունների մշակման և հիմնավորման, ինչպես նաև կիրառական առաջարկությունների փուլերում:

Հեղինակի 13 գիտական աշխատանքները և ատենախոսության սեղմագիրն օբյեկտիվորեն և ամբողջությամբ բացահայտում են աշխատանքում դրված խնդիրների լուծումները, ատենախոսության հիմնական դրույթները, գիտական եզրակացությունները և կիրառական առաջարկությունները, ինչը վկայում է գիտական հանրությանը և մասնագետ-պրակտիկներին հետազոտության ընթացքում ստացված գիտական արդյունքների իրազեկման բավական բարձր մակարդակի մասին:

Գիտական դրույթների նորույթի հիմնավորման աստիճանը

Ատենախոսական աշխատանքում հեղինակի ձևակերպած գիտական խնդիրների լուծումը հնարավորություն է ընձեռել ստանալու արդյունքներ, որոնք վկայում են դրանց գիտական նորույթի տարրերի, տեսական և կիրառական արժեքավորության մասին:

Հետազոտության ընթացքում օգտագործվել են թեմային առնչվող ընդարձակ գրականություն, պարբերական հրատարակություններ, գիտագործնական համաժողովների նյութեր, միջազգային կազմակերպությունների համաժողովների նյութեր, զեկույցներ: Որպես տեղեկատվական հենք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի, ՀՀ Կենտրոնական բանկի, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի տվյալների բազաները և վերլուծական նյութերը հեղինակի կատարած առցանց հարցումների արդյունքները, ինչը պայմանավորում է ստացված արդյունքների արժանահավատությունը և հիմնավորվածությունը:

Մասնավորապես, առաջին նորույթը հիմնավորված է կոռելյացիոն-ռեգրեսիոն վերլուծությամբ ստացված արդյունքներով և ատենախոսության հիմնական գաղափարի հիմքում է հանդիսանալով քանակական գնահատականն այն բանի, որ ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրներից ներքին աղբյուրներին անցմամբ միայն հնարավոր կլինի ապահովել ներդրումների կայուն բարձր մակարդակ:

Երկրորդ նորույթի հիմնավորվածությունը, որը վերաբերում է խնայողություններ-տնտեսական աճ փոխկապվածության ուղղության բացահայտմանը, պայմանավորված է օգտագործված մեթոդով՝ Գրեյնջերի թեստով, որի հաճախակի կիրառությունները հանդիպում են նմանատիպ արտասահմանյան հետազոտություններում:

Երրորդ նորույթը ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հետաքրքրություն է ներկայացնում հատկապես զուտ խնայողությունների ճշգրտման մեթոդական մոտեցմամբ, որը կիրառվում է Համաշխարհային բանկի հետազոտողների կողմից և որը տարբերվում է վերջինից նրանով, որ առաջարկվում է կատարել զուտ խնայողությունների ամբողջական ճշգրտում՝ նրանում ներառելով մարդկային կապիտալում կատարվող ներդրումները՝ առողջապահության, կրթության և գիտության համար կատարվող ծախսերը, ինչը տրամաբանական է և հիմնավորված:

Երրորդ նորույթը, կապված սահմանային տեխնոլոգիաների ներդրման համար արտահանման հարթակի ՕՈՒՆ-ի և ներքին ներդրումների հետ, հիմնավորված է, նկատի ունենալով հեղինակի բերած փաստարկները և այն, որ առաջարկվող հայեցակարգի հիմքում ԱՄՆ Տնտեսական հետազոտությունների ազգային բյուրոյի, Հարվարդի և Բրաունի համալսարանների մշակումներն են, արտահանման հարթակների ստեղծման տասնամյակների միջազգային փորձը:

Զուտ խնայողություններին վերաբերող չորրորդ նորույթը հիմնավորված է նրանով, որ օգտագործվել է Համաշխարհային բանկի կողմից կիրառվող մեթոդական մոտեցումը և, բացի դրանից, թվում է, թե հեղինակի առաջարկությամբ ավելի ամբողջական ճշգրտման է ենթարկվում մակրոտնտեսական այդ կարևոր ցուցանիշը, որը հեղինակն իրավացիորեն առաջարկում է օգտագործել որպես տնտեսական աճի որակի ցուցիչ:

Հինգերորդ նորույթը վերաբերում է խնայողական գործընթացներում տնային տնտեսությունների ներառականության աստիճանի բարձրացմանը, ինչը կարևոր է նրանց խնայողությունների բացասական մակարդակի և հեղինակի կողմից բացահայտված խնայողական վարքագծի խորապատկերին: Բացի նրանից, որ դրանով առաջարկվում է «երկար փողեր» ստեղծելու ևս մեկ ինստիտուցիոնալ մոտեցում, խոսքը վերաբերում է նաև նոր սերնդի ողջամիտ խնայողական վարքագիծ ձևավորելուն: Այս համատեքստում կարևոր է նաև պետություն-մասնավոր հատված գործընկերության զարգացումը: Առաջարկվող «խնայողություն՝ զարգացման համար» սխեմայում այդ գործընկերության տեսանկյունից, կարևորվում է տնային տնտեսությունների ներդրումը խնայողական հաշիվներում, ինչը դյուրացնելու նպատակով, հիմնավոր է թվում ըստ վճարունակության սկզբունքի հարկմանն անցնելուն վերաբերող առաջարկությունը:

Վիճելի հարցեր և դիտողություններ

Թեև կատարված հետազոտությունն ավարտուն, հիմնավորված և արժանահավատ է, նորույթը և եզրակացություններն արժեքավոր, այնուամենայնիվ, աշխատանքի որոշ դրույթների և կողմերի առնչությամբ կարող են լինել դիտողություններ.

1. Աշխատանքում հեղինակը գրեթե անդրադարձ չի կատարել կենսաթոշակային ֆոնդերին: Մինչդեռ վերջին տարիներին ՀՀ-ում էական փոփոխություններ են տեղի

ունեցել կենսաթոշակային նոր համակարգի ներդման ուղղությամբ, ինչի արդյունքում կուտակվել են նշանակալի ֆինանսական ռեսուրսներ (խնայողություններ), որոնց մի մասը ներդրվում է ոչ ՀՀ ֆինանսական շուկայում: Որպես ներդրումների ֆինանսավորման ներքին աղբյուր՝ կենսաթոշակային ֆոնդերի դիտարկումն ավելի շահեկան կդարձներ աշխատանքը:

2. էջ 150-154-ում ներկայացված, «խնայողություններ զարգացման համար», խնայողական սխեմայի հայեցակարգի առումով, պարզաբանման կարիք ունի, թե

   ա) ով պետք է լինի անհատական խնայողական-ներդրումային հաշիվներում կուտակվող միջոցներից ձևավորված ֆոնդի կառավարիչը,

   բ) ինչի հաշվին է տեղի ունենալու խնայողությունների՝ տարեկան 5% աճը,

   գ) կուտակվող միջոցները որտեղ են ներդրվելու և ինչ սկզբունքով:

3. էջ 127-ում առաջարկված օրենսդրական փոփոխություններից (1 և 2 կետեր) կարելի է եզրակացնել, որ ատենախոսության 3.1 և այլ բաժիններում հեղինակը առավել հակված է քայլեր ձեռնարկել ՕՈՒՆ-ի գրավչությունը առավել բարձրացնելու ուղղությամբ, ինչն անխոս կարևոր է, սակայն, կարծես, հետազոտական թեմայի շրջանակներից դուրս:

4. Որոշ դեպքերում անհասկալի են և դժվար ընթեռնելի են հեղինակի կազմած մի շարք գծապատկերներ (օրինակ՝ էջ 104, 105, գծապատկեր 2.10, 2.11): Մինչդեռ դրանց համար հիմք հանդիսացած աղյուսակները զետեղվել են հավելվածի տեսքով: Այս առումով, իմաստ չունի նաև էջ 26-ում տեղ գտած գծապատկեր 1.1-ը:

Արված դիտողությունները չեն նվազեցնում կատարված հետազոտության արժեքավորությունը, չեն ազդում գիտական նորույթի դրական գնահատականի վրա և կարող են դիտարկվել որպես առաջարկություններ՝ հետագա հետազոտություններ կատարելիս:

Ատենախոսության համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին

Դավիթ Գագիկի Վարդանյանի «Համախառն ներքին խնայողությունների և տնտեսական աճի միջև փոխկապվածության գնահատումը Հայաստանի Հանրապետությունում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապե-

տությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, հեղինակի գիտական հետազոտությունների հիման վրա կազմված աշխատություն է, տնտեսական տևական կայուն աճի համար անհրաժեշտ նեքին ներդրումների ֆինանսավորման ներքին աղբյուրներին առնչվող կիրառական կարևոր խնդրի լուծումն ապահովող հիմնավորված տնտեսական մշակում է: Հեղինակը՝ Դավիթ Գագիկի Վարդանյանն արժանի է Ը.00.03-«Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ՝ Գ. Է. Սահակյան

Պաշտոնական ընդդիմախոս,
տնտեսագիտության թեկնածու, ասիստենտ
Գ. Է. Սահակյան ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար Մ. Վ. Հովհաննիսյան

20.05.2022 թ.